

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

07.06.2024 16:58



Հարգելի փաստաբաններ,

Տեղեկացնում ենք, որ այսօր Ազգային Ժողովի Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամների, ինչպես նաև հարկային քաղաքականության մշակման պաշտոնատար անձանց հետ քննարկվել են Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծում ներառված փաստաբանական ծառայությունների հարկման նոր ռեժիմին անցման խնդիրները: Քննարկմանը ներկա են եղել նաև Նոտարական պալատի և այլ ոլորտի տնտեսվարողների ներկայացուցիչներ:

Քննարկման ընթացքում ներկայացրել ենք փոփոխություններով պայմանավորված արդարադատության մատչելիության, իրավական պաշտպանության հասանելիության սահմանափակման, խտրականության, ծառայության ինքնարժեքի բարձրացման, անվճար իրավաբանական օգնության հնարավորության սահմանափակման, հանրային պաշտպանի գրասենյակի բեռի շեշտակի ավելացման, անկախության և այլ խնդիրները:

Այնուհետև, հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյանը և նախագծի հիմնական գեկուցող՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանը հայտնել են, որ մինչև գլխադասային հանձնաժողովի նիստը ներքին քննարկումներ կունենան՝ հաշվի առնելով մեր դիրքորոշումները:

Հաջորդիվ զարգացումներով պայմանավորված կքննարկենք մեր հետագա գործողությունները:

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })